

տարուած՝ ա՛յնքան կը վարժուի իրերը իրենց առօրեայ գործածութեանը մէջ միայն առնելու որ անզգայ կը դառնայ այն անտեսանելի ներկայութեանց որոնք կրնան յայտնուիլ անոնց հետեւն անոնց մէջ, ու նաեւ ֆիզիքական երևոյթներու գիտունը, «միայն գիտունը» ու այդ պատճառաւ իսկ ոչ ամբողջական հոգին, ա՛յնքան տարուած ու մասնաւորուած կ'ըլլայ տարրականին ու տարերայինին նկատողութեանը մէջ որ ալ ևս աչք չունենար տեսնելու այն հոգեկանը որ կրնայ յայտնուիլ այդ ֆիզիքականին մէջ իրը զայն իր մարմնաւորումին համար կը գործածէ:

Բ. Աւակեհրք. — Եթէ միայն ըսուէր որ Հացն ու Դինին պատարագի խորհուրդին մէջ կը դառնան խորհրդակիցեր Քրիստոսի Մարմնոյն ու Արեան՝ ողջմտութիւնը պիտի քաշէր դեռ: Բայց եկեղեցւոյ վարդապետութիւնն է՝ թէ անոնք հոն իրապէս համարժեք կը դառնան անոնց, ու ալ հաւաստումն առջև է որ այլևս սոչ-կտրմեր կը դնէ զրական միտքը: Ու կը խոստովանիմ՝ դժուար է ինծի եկեղեցւոյ վարդապետութեան բերել զինքը:

Ուրիշ աւակեհրք մը. — Ես ալ խօսած եմ շատ անգամ անհաւատներու հետ ու անոնք գրեթէ ամէնքն ալ ըսած են նոյն բանը. — Ի՞նչ պէտք կրնաք ընդունիլ որ հացն ու զինին իրենց ֆիզիքական նոյն յատկութիւնները պահելով հանդերձ կրնան փոխել իրենց խորունկ բնութիւնը ու այդպէս համարժէք դառնալ Քրիստոսի Մարմնոյն ու Արեան:

Ա. Աւակեհրք. — Կը ներէք, վարդապետ, որ այս խնդրին առթիւ դարձեալ բերեմ այն բացատրութիւններէն զորս կը թելադրէր մեզի իմ նախորդ դպրոցի իմաստասիրութեան ուսուցիչս որ, այս պարագային ևս, Արուեստի իրականութիւններէն կը մեկնէր կրօնականները հասկնալի դարձնելու համար մեզի:

Վարդապետ. — Որով. մասնաւոր թէ կը գնահատեմ իր գիտումին խորը քանի որ ես ալ կը մտածեմ թէ այս օրուան մարդոց ոգեկանին խորհուրդը ամենէն աւելի մատչելի է՝ ոգեկանին պատկանելով հանդերձ գերազանցապէս զգայականը ընդգրկող գործունէութեան մէջէն՝ որ Արուեստինն է. ոչ մէկ տեղ այնքան

որքան Արուեստին մէջ, պէտք է ըսել, ոգեկանը զգալի, շօշափելի ըլլալու չափ թանձրացեալ կը դառնայ, հետեւաբար և իբրեւ ինքնուրոյն իրականութիւն անժխտելի:

Ա. Աւակեհրք. — Անիկա կ'ըսէր ուրեմն մեզի, առակ մը պատմելու պէտք. — «Բերթողը մեռեր էր իր քերթուածը ձգելով շուրջիններուն և ըսելով անոնց այդ տետրակին համար — «Ես եմ այս. իմ մարմինս է և արիւնս. կարդացէք զայն իմ յիշատակին»: — Տետրակը թուղթ էր և չորցած մեկան, ստարկա՛յ մը եղաւ տունին մէջ ուրիշներու քով: Տղաքը երբեմն ձեռք կ'անցնէին զայն, իրենց համար տետրակ մըն էր ան որու պէսները կը ծախէր զիմացի թղթավաճառը: Բայց քերթողը ըսած էր անոր համար. «այս ես եմ»: Ու մեռեր էր քերթողը, իր մարմնովն ու հոգովը չքացեր բոլորին աչքերէն: Օր մը սակայն շատ մարդեր ժողովուեցան մեծ սրահի մը մէջ. դժուար եղաւ լսուիլ հոն բերել իրենց զանազան բոլոր դուռներէն ու հաճոյքներէն փրցնելով: Ու հակառակ որ ժողովուած էին սրահին մէջ, շատ աղմուկ կար հոն, որովհետեւ ամէնքը կը խօսէին իրարու իրենց առօրեայէն, գործերէն, հոգերէն ու հաճոյքներէն: Բայց բեմին վրայ մէկը եկաւ ու հրաւիրեց ամէնքը Լուսթեան. միտքերը դժուարաւ քակուեցան իրենց բազմադէպ առօրեայէն ու լարուեցան դէպի նոյն ու միակ բեմը. տրամադրուեցան լսելու: Ու երբ Լուսթեանը եղաւ — պէտք է ըսել թէ կրօնական բան մը կար այդ Լուսթեան մէջ, յայտնութեան մը Սպասումը ու Նախապագացումը արդէն —, ու երբ եղաւ Լուսթեանը, առաջ եկաւ Արտաստնողը, ձեռքին մէջ այն տետրակը: (Բերթողին տունէն տղայ մը ճանչցաւ զայն կողքի գոյնէն): Ու սկսաւ կարգալ, արտասանել բարձրաձայն:

«Ու քանի իր աչքերը «կ'ուտէին» զիրերը ու միտքը «կը մարսէր» զանոնք, իր բերնէն ներգաշնակօրէն ոլորակուող ձայն մը դուրս կուգար և կը տարածուէր սրահին մէջ, կ'ելեւելէր, երբեմն զօրանալով երբեմն մեղմանալով, դանդաղելով մերթ ու արագանալով նորէն ու այդպէս անօրինակ կշռոյթ մը ձևացնելով. . . ու քանի մարդոց ականջները «կը խմէին» այդ ձայնը ու իրենց միտքը «կը մարսէր» անոր ոլորակումները անիկա Խօսք կը դառնար

իրենց ներսը և հոն տարօրինակ մարմին մը կը կազմէր հրաշագեղ պատկերներու, թեալ որ խորհուրդներու, ըղձանքի խոյանքներու և սիրալի որտաղեղումներու բազմազան տարրերէն շինուած՝ տեսակ մը հոգեղէն, կենդանի, միակ մարմին մը։ Նոյն մարմինը բոլոր մարդոց մօտին՝ որմէ հոգեոյ նորօրինակ սնունդ մը կ'առնէին անոնք իրենց էութեան մտերմութեանը մէջ և որ նոյնօրինակ խանդով մը կը լեցնէր իրենց քիչ առաջուան այնքան տարբեր ու անտարբեր հոգիները։ Եւ այդ մարմինը — կը ճանչնային հիմա — նոյն ինքն Քերթողին հոգեոյն՝ ոգեղէն մարմինն էր և անոր մէջ շրջող արիւնը նոյն ինքն Քերթողին հոգեոյն մէջ շնչող աւելնէր։ զոր բուրուժաւէտ գինիի մը պէս կը խմէին իրենց հոգիները անով անասելի զգլխանքի մը ուրախութիւնը հրճուելով։

«Անոնք որ լսած էին քերթողին խօսքը տետրակին համար թէ «այս ես եմ, այս իմ մարմինս է և արիւնս», սրահին մէջն էին, և կ'ըսէին հիմա իւրովի թէ՛ ճշմարիտ էր իր ըսածը։ Երբ քերթուածը աւարտեցաւ, սրահին մէջի բոլոր մարդերը անոր ձայնեղէն մարմինն ետին յայտնուած նոյն իմաստին կը մասնակցէին, նոյն իմաստը կը բաժնէին իրենց մէջ, որ հակառակ այդ բաժանումին կը քնար ամբողջ ու մի. նոյն խանդը կը լեցնէր բոլորը, որ զիրենք վեր կը հանէր իրենց գետնաքարչ առօրեայէն ու վերին Ստուգութեամբ մը, ամէն հոգի զէմ զիմանալու կարող Յոյսով մը, աննուաճելի ըլլալու սահմանուած — գէթ իրենց այնպէս կը թուէր — քաջութեան Ուժով մը կ'օժտէր . . .»

«Եւ երբ Արտասանողը զոցեց տետրակը, մարդերը իրարու երես նայեցան և ալընթարթ մը իրարու աչքին մէջ նոյն հոգին ճանչցան ու սիրեցին. Քերթուածէն յայտնուած Քերթողին հոգիին մէջէն իրարու հոգին կը սիրէին . . .»

Վարդապետը. — Խորհուրդ Հաղորդութեան . . .

Ուրիշ առակերս մը. — Ինձ այնպէս կը թուի թէ այլաբանութիւնէ մը աւելի բան մըն է այս, որովհետեւ քերթուածին տառին տակ անկէ զլսողին տարաբնոյթ՝ քերթուածի ոգեղէն մարմինն յայտնութեան եւ ասով մարդոց հաղորդութեան ու Պատարագի

Խորհուրդին մէջ պատահածին միջև կայ ոչ թէ պարզ նմանութիւն մը միայն այլ հոգեկան գործողութեան նոյնութիւն մը իսկ։ Եւրօպայի նութեան գիծերը վեր առնել զիւրին է. պիտի մեկնենք Քերթողը իբրեւ Քրիստոս, թուղթ ու մեկանը՝ հաց ու զինի, Արտասանողը՝ Պատարագիչ, ու Լուսնիւնը՝ ապաշխարութեամբ Պատրաստութիւնը ընդունելու Յայտնութիւնը։ Բայց աւելին. չենք կրնար քերթուածի զիրին ու անոր իմաստին յարաբերութեան տեսակը վերլուծել, լով ըմբռնել եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ Հաց-Գինիին՝ Քրիստոսի Մարմինն ու Արեան փոխուելուն։

Վարդապետը. — Կը խորհիմ թէ կարելի է ու լաւ։ Քերթուածը, արդարեւ, զրուած է նախ տետրակին մէջ իբրեւ նութեղէն բան մը՝ թուղթ ու մեկան. երբ կը կարգացուի, կ'արտասանուի կը դառնայ լսողներուն համար նոր բան մը, ձայներու ամբողջ մը, բայց զարծեալ և գեռ նութեղէն միայն բան մը։ Բայց ահա որ երբ այդ ձայները մտիկ ընող միտքերը ճշդիւ կը տրամադրուին անոնց հասկացման՝ այդ ձայնեղէն մարմինն ետին կը յայտնուի բուն իսկ քերթուածը, այս անգամ, իբրեւ երեւակայութեան պատկերներէ, զգացման թելադրանքներէ, գաղափարներէ հիւստեւած իմաստի հոգեղէն մարմին մը։ Ու հիմա, այս վերջինն է որ կը դառնայ կ'ըլլայ խորունկ և իրական գոյացութիւնը, որուն իբրեւ յայտակերպիչ երեւոյթները միայն կը ներկայանան այլեւս ձայները. կը յայտնուի թէ այդ իմաստն է, թէն ծածուկ, բայց բուն գոյացութիւնը քերթուածին ձայնեղէն ու գրեղէն երեւոյթներուն՝ որոնց իրմէ՛ կուգան էական սարուածքն ու կարգը. այդ երեւոյթներուն կերպարանքը ու տարերային գոյացութիւնը կը հրամանակարարուէին ուրեմն աւելի խորունկ ու էական այն իմաստ-գոյացութենէն որ բուն պատճառն էր իրենց կերտուածքին, ինչպէս գոյացութիւնը բուն ու մի պատճառն է այն յատկութիւններուն որոնցմով կ'երեւին մեզի իրերը։

Ուրեմն քերթուածին նախ գիծերէ եւ ապա ձայներէ շինուած նութեղէն մարմինն ու անոր նութեական յատկութիւններուն տակ, որոնք արտաքինապէս կը շարունակեն նոյնը մնալ ու երեւիլ, զայն, այսինքն քերթուածը իմացողներուն գործակցութեամբ ճշմա-

րիտ անդրդրոյացաւ որում մը յառաջ կուգայ իմաստի կատարելապէս իրական ոգեղէն մարմին մը, որ ոգեկան կարգին յատուկ մէկ խորհրդաւոր պրօցէկտով ճշմարտապէս համարժէք է քերթողին կողմէ իսկ ստեղծուած իմաստին, — ինքն իսկ մէկ մարմնաւորումը քերթողին հոգւոյն ու հանճարին:

Ճիշդ այդպէս ալ պատարագի նուիրակուն խորհուրդին մասնակից հաւատացեալները կը զգան դոյանալը հացին ու գինիին երեւոյթներուն տակ, որոնք արտաքինապէս կը շարունակեն նոյնը մնալ ու երեւիլ, նոր, ու այս անգամ հոգեղէն մարմին մը որ ուրիշ բան չէ բայց եթէ եկեղեցին իսկ, իր իսկութեանը մէջ իբրեւ Քրիստոսի միսթիք մարմինը, որ համարժէք է իր կարգին Քրիստոսի հոգւոր մարմնին ու արեան ուրոնցմով յայտնուած է նոյն ինքն Քրիստոսի հոգին:

Այնպէս որ, գրեթէ տառապէս ճիշդ է ըսել թէ սրբագործուած Նշխարն ու Գինին ընդունողները անոնց մէջէն կը ճաշակեն հոգեպէս Քրիստոսի հոգւոր Մարմինը ու Արիւնը, ինչպէս ճիշդ է ըսել թէ քերթուածին ձայնեղէն մարմինը ընդունողները անոր մէջէն իրենց մտքովն ու սրտովը կը ճաշակեն նոյն ինքն քերթողին աշխարհ գրած և իր կարգին քերթողին հոգին աշխարհի մէջ դնող քերթուածին ոգեղէն մարմինը . . . որուն մէջէն ալ տակաւին կը հաղորդակցին քերթողին հոգւոյն իսկ հետ:

Ա. Աւակեթք. — Ի՞նչ ապշեցուցիչ խորհուրդ զգալի ձեւերուն մէջ իմաստին, իմանալիին մարմնացման ու յայտնութեան խորհուրդը . . .

Բ. Աւակեթք. — Սակայն, վարդապետ, հակառակ իրենց հիմնական հանգիստութեան չէ՞ք կարծեր որ կարեւոր ալ տարբերութիւններ կան այն երկու պարագաներուն մէջ զորս կը բաղդատէք իրարու հետ:

Վարդապետք. — Անշուշտ. ու զոնէ պէտք է ըսել այն էականը որ՝ մինչ քերթուածը իր իմաստը կը թելադրէ մտիկ ընողներուն անոր տարբերուն զուգորդուած ձայնական ոլորումներուն յատկապէս տըրւած Զեռով մը որ գործն է քերթողին, և հեռաբար մինչ հոս ունինք հոգեբանական իրականութեան բնական օրէնքներուն իսկ մէկ օգտագործումը, — սրբագործուած Նշխարն ու Գինին Քրիստոսի մէկ հրաշալի

տնօրինութեա՛մբն է գրեթէ միայն՝ որ Պատարագի խորհուրդին մէջ կը դառնան կ'ըլլան համարժէք իր Մարմնոյն ու Արեան: Ուրեմն իրապէս միսթիք իրականութեան մը դիմաց է որ ունինք մենք զմեզ Պատարագի խորհուրդին մէջ: Բաղդատութիւնը, հեռաբար, ծառայած եղաւ ոչ թէ նոյնացնելու երկու պարագաները այլ կարելի եղածին չափ մօտեցնելու մեր միտքը կրօնական խորհուրդին ըմբռնման. այս վերջինը կը մնայ միշտ հրաշք մը սակայն, Քրիստոսի ամբողջական գործին իսկ հրաշքին մասնակից:

Ա. Աւակեթք. — Բայց եթէ բաղդատութիւնը շարունակել ուղենք, պիտի չգիւրացնէ՞ ան տակաւին մեզի ըմբռնելու, այս անգամ, բուն իսկ «հաղորդութեան» իրողութիւնը Պատարագի խորհուրդին մէջ:

Վարդապետք. — Այո՛, ինչ որ միտքս էր ընել . . . Եթէ երկու պարագաներուն մէջ զուգահեռականութիւն մը տեսանք զգալիին տակ իմանալիին անդրագոյաւորման տեսակէտէն՝ հոգեկան այդ խորհրդաւոր երեւոյթին արդիւնքներուն մէջ ալ կըրնանք դիտել նոյնպիսի զուգահեռականութիւն մը:

Բ. Աւակեթք. — Կարծեմ Պատարագը պիտի սկսի:

Ուրիշ աւակեթք մը. — Դեռ ատեն ունինք, վարդապետ, շարունակենք:

Վարդապետք. — Քիչ մը առաջ ոգեկոչուած սրահին մէջ անոնք որ պահ մը յաջողած էին ամփոփել առօրեային մէջ ջրուած իրենց միտքը և զայն լարել ու սեւեռել գէպի Արտասանողէն իրենց եկած քերթուածը, զգացին իրենց էութեան բարձրանալը մինչև քերթողին հոգին որուն հետ հաղորդակից գտնուեցան. արդիւնքը այն եղաւ որ անոր իրենց պատմածին հետ իրենց հոգիին մէջ հոսեցաւ իմանալի լոյս մը, իմանալի ջերմութիւն մը, որ գէթ պահ մը այլափոխեց իրենց էութիւնը, զայն հանեց վերին մակարդակի մը, Ոգեկանի Սակարդակին, իրեն խորհրդաւոր սնունդովը սնուցանելով իրենց իմացականութիւնը, և խանդ մը ստեղծելով իրենց սրտին մէջ որմէ նոր ոյժ մը պիտի կրնար ստանալ առօրեային մէջ պայքարող իրենց կամքը: Ահա առաջին արդիւնքը. այս հաղորդութիւնն է մարդոց ու քերթողին հոգիներուն՝

որով քերթողին խեղճական աշխարհէն իսկուծիւն մը կը հոսի մարդոց սրտին մէջ:

Բայց կայ դեռ երկրորդ արդիւնք մը. այդ մարդերը օտար էին իրարու երբ չորս կողմերէն սրահ եկան. արդ՝ իրենք շատ ուսարբեր՝ մի և նոյն քերթուածին իմաստին մասնակցելով, մի և նոյն Աւիւնին բացուելով՝ քերթուածի աւարտման՝ երբ իրենց նոյնօրինակ խանդավառութենէ մը լայնցած և ուրախացած բիրերը իրարու դարձուցին՝ իրարու մէջ պահ, մը նոյն հոգին տեսան ու սիրեցին: Եւ աւելին, եթէ այդ պահուն մէկը առաջարկէր իրենց քերթուածի ոգւոյն ուղղութեանը մէջ հաւաքական արարք մը իրագործել, այդ առաջուան իրարու օտար մարդերը ձեռք ձեռքի պիտի տային ու Գերթողէն իրենց հոսած Սէրը պինդ պիտի սեղմել տար այդ ձեռքերը. ու թեւեւ հրաշք մը ելլէր այդ համազգացութենէն և համակամութենէն:

Այսօրինակ նաև, բայց ա՛յլապէս ամբողջական և տեական՝ արդիւնքները Քրիստոսի Մարմնոյն ու Արեան հաղորդութեանը մարդոց:

Ան որ ըսած էր թէ «ոչ միայն հացիւ կեցցէ մարդ այլ և բանիւ», Բանէն Հաց մը չիկնեց ու Հոգիէն՝ Գինի մը անոնցմով սնուցանելու, ուժաւորելու ու անպատում հրճուանքով մը հրճուեցնելու համար զանոնք ճաշակողները . . .

Ու Ան որուն անունով ըսուած էր թէ՝ Սէր է Աստուած, նոյն այն իր Մարմին - Հացին ու իր Արիւն - Գինին ճաշակումովը մարդերուն համար հաստատեց՝ իրարու աչքի մէջ իբրեւ եղբայր եղբոր աչքի մէջ կարենալ նայելու հրաշքը . . . Դիտե՞ք բան մը աւելի խոր խորհրդանշութեամբ մը յուզիչ՝ քան սրբութեան այն Համբոյրը զոր իր պատարագին մէջ Հայաստանեայց Եկեղեցին կ'իջեցնէ Ակիւնէն՝ Տաճար՝ զայն լեցնող բազմութեան մէջ զայն տարածելու իբրեւ աստուածեղէն սիրոյ ալիք մը . . .

Լուսարարը (մօտենալով) — Զեգի կ'ըստ պատեն պատարագի թափօրին համար:

Շատպեցին հագնելու շապիկները. որոնց անմակին ու ոսկիին մէջ փչցնոյ աղուորացած, իբրեւ պայծառակերպուած, կը մտնէին կարգի՝ նորին նորհուրդին մէջ բարձրանալու:

Նուսապէմ

Շ. Ռ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԿՈՐՆԹԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(ԽՈՂԵՐ ԵՒ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՂԼԱԳԱՅԷՆ)

Հեղ. ԳՐ. ՆՇԱՆՆԱՆ. Տպ. Պուրէտ, 1938, 390 սովորական էջ. պատկերազարդ. գին 1.25 տպր:

Տիտղոսը այս հատորին — «Կորնթեան Նամականի» — թելադրուած է, Ելլադայի աւերակներուն տրուած «ուխտագնացութենէ» մը: Անիկա, իմ. գլուխներու բաշխուած, չարք մըն է «տպաւորութեանց և խոհերու», գրեթէ բոլոր հին յունական փառքին վաւերացումը կազմող յիշատակներուն ոգեկոչումէն յառնող:

Այս էջերը, հատորի վերածուելէ առաջ, հրատարակուած են արդէն «Վերջին Լուր» օրաթերթին մէջ, 1923—24ի տարիներուն, ինչպէս կը վկայէ հեղինակը: Այս յայտարարութիւնը, ինքնին կը ճշգէ մէկ յատկանիշը գրուածքին — լրագրականութիւնը: Միւս կողմէ կարելի չէ ըսել թէ, (իր օգիտանքի ընկերուհին» տեղեակ պահելու դիտումով իր տպաւորութիւններուն), ի՞նչ չափով բնական է, չըսելու համար նամակագրական, վերաքաղը ընել պատմութեան, իմաստասիրութեան, բարոյագիտութեան դասընթացքի մը: Եւ սակայն, «վերհալումով», հատորի մը մէջ ամփոփելու այս ջանքը, նկատողութեան արժանի կողմ մըն է, հեղինակին անձին տեսակէտէն մասնաւոր:

Սեռը որ կը փորձուի այս էջերուն մէջ, առ հասարակ սպասուած նամակագրական կենդանի պատմումը, ուղեգրութիւնը ըլլալէ աւելի, նոր օրերու reportage-ն է, որ ըլլայ գործադրուած առաւելապէս յիշատակ դարձած կեանքերու շահագործումին: Վերտանգը ասոր՝ սահմանափակուիլն է զազափարներու մասնաւոր շրջանակի մը, բռնի ենթարկուիլն է նեղ հորիզոնի մը: Հակառակ այս վտանգին սակայն, ծանօթ են նուններ, օտար գրականութենէն, որոնք յաջողեր են գեղեցկութիւններ հանել, արժէքներու բարձրանալ, նոյն սեփին մէջէն:

Իսկ այն հողը, որուն աւիշովը կենսաւորուելու ճիգ մը ունին էջերը այս հատորին, փառաւոր քաղաքակրթութեամբ, պատմական Ելլադան է, միջազգային գրականութեան մէջ այնքան ստուար հատորներու ծնունդ տուած, և այնքան բեղուն միտքերու